

**ሆኖ
ህይወትህ**

Bookmark 

NIALL FERGUSON

THE GREAT DEGENERATION

How Institutions Decay and Economies Die

Bookmark

ՆԻԼ ՖԵՐԳՅՈՒՍՈՆ

ՄԵԾ ԱՆԿՈՒՄ

Ինչպես են քայքայվում ինստիտուտներն,
ու կործանվում տնտեսությունները

Թարգմանությունն անգլերենից՝
Դավիթ Սարգսյանի

new
mag

ԵՐԵՎԱՆ
2020

ՀՏԴ 94(100)
ԳՄԴ 63.3(0)
Ֆ 471

Ֆերգյուսոն Նիլ
Ֆ 471 Մեծ անկում. Ինչպես են քայքայվում ինստիտուտներն, ու կործանվում
ունտեսությունները/ Նիլ Ֆերգյուսոն.- եր.: Newmag, 2020.- 200 էջ:

Ինչո՞ւ են հարուստ երկրներն անկում ապրում: Դրա նախանշաններն այսօր
ամենուր են. տնտեսական աճի դանդաղում, կործանարար պարտքեր, աճող
անհավասարություն, ծերացող բնակչություն, հակասոցիալական վարք: Բայց
հատկապես ինչն է սխալ: «Մեծ անկում» գրքում Նիլ Ֆերգյուսոնը բացատրում է,
որ արևմտյան ինստիտուտները՝ բարդ համակարգերը, որոնցում հասարակությունը
կարող է ծաղկել կամ կործանվել, այսօր քայքայվում են:

Արևմտյան ժողովրդավարությունն այսօր խզել է սերունդների միջև եղած
համաձայնությունը, քանի որ մեր երեխաներին ու թոռներին թողնում ենք պարտքի
մեծ բեռ: Մեր շուկաների բնականոն զարգացումը խեղվում է չափազանց
բարդ կարգավորումների պատճառով, եղած խնդիրները լուծելու փոխարեն
դրանք ի հայտ են բերում նորերը: Իրավունքի գերակայությունը վերաճում է
իրավաբանների գերիշխանության: Քաղաքացիական հասարակությունը դարձել
է ոչ քաղաքացիական, մարդիկ էլ ծուլաբար ակնկալում են, որ իրենց բոլոր
խնդիրները պետք է լուծի պետությունը:

Արևմուտքի՝ երբեմնի գերիշխող քաղաքակրթության հետընթացը կանգնեցնելու
համար Ֆերգյուսոնը զգուշացնում է՝ պետք է հերոսական առաջնորդություն
և արմատական բարեփոխում: Արևմտյան քաղաքակրթության ձախողումը
դատապարտող «Մեծ անկում» աշխատությունը յուրատեսակ մեղադրական
եզրակացություն է՝ սթափվելու կոչով:

ՀՏԴ 94(100)
ԳՄԴ 63.3(0)

Գրքի գլխավոր հովանավոր՝
ԼՈՒՅՍ ՀԻՄՆԱԴՐԱՄ
www.lusys.am



ISBN 978-9939-884-03-5

Նիլ Ֆերգյուսոն «Մեծ անկում» © 2020, «Նյու Մեգ» ՍՊԸ
The Great Degeneration Copyright © 2012, Niall Ferguson All rights reserved
Շապիկի լուսանկարը՝ © Ռոբերտ Մարտիրոսյան
Հեղինակի լուսանկարը՝ © Tom Barnes

Այս գրքի հայերեն թարգմանության և հրատարակության իրավունքները պատկանում են
«Նյու Մեգ» ՍՊԸ-ին: Թարգմանությունն իրականացվել է The Wylie Agency (UK) LTD ընկերության
հետ կնքված պայմանագրով: Հայերեն հրատարակության իրավունքները ձեռք են բերվել
ԱՐԻ գրական գործակալության միջոցով:

Բովանդակություն

Ներածություն	9
1. Մարդկանց փեթակը	33
2. Դարվիհյան տնտեսությունը	65
3. Իրավունքի դաշտը	99
4. Քաղաքացիական ու ոչ քաղաքացիական հասարակություններ	137
Վերջաբան	167
Երախտագիտության խոսք	188
Ծանոթագրություններ	190

«Վերավարկավորումից» անդին

Մոտ քառորդ դար առաջ՝ 1989 թվականի ամռանը, Ֆրենսիս Ֆուկոյաման վստահաբար կանխատեսել էր «տնտեսական և քաղաքական լիբերալիզմի անկասելի հաղթանակը... Արևմուտքի հաղթարշավը»: Նա ազդարարել էր, որ «արևմտյան լիբերալ ժողովրդավարությունը՝ որպես կառավարման գերագույն ձև, դառնալու է մարդկության գաղափարական զարգացման վերջնակետը»¹: Որքան այլ է աշխարհն այսօր: «Տնտեսական լիբերալիզմը» փայլագրկված բրենդ է, մինչդեռ Չինաստանում և այլ երկրներում «պետական կապիտալիզմի» աջակիցները բացահայտ ծաղրում են արևմտյան ժողովրդավարությունը: Արևմուտքը լժանում է (և ոչ միայն տնտեսական առումով): Համաշխարհային բանկը 2013-ին ակնկալում էր, որ եվրոպական տնտեսությունը կկրճատվի, ԱՄՆ տնտեսությունն էլ կաճի ընդամենը 2%-ով: Չինաստանը կաճի չորս անգամ արագ, Հնդկաստանը՝ երեք: ԱՄՀ տվյալով 2017 թվականին Չինաստանի ՀՆԱ-ն կգերազանցի ԱՄՆ-ինը (առաջին հերթին գնողունակության կարողության հիման վրա՝ հաշվի առնելով, որ ոչ առևտրային ապրանքները և ծառայությունները շատ ավելի էժան են Չինաստանում,

քան ԱՄՆ-ում: Դոլարի այսօրվա փոխարժեքի պայմաններում 2016 թվականին Չինաստանի տնտեսությունը կկազմի ԱՄՆ տնտեսության 60%-ը, մինչդեռ 1989 թվականին այն ԱՄՆ տնտեսության 8%-ն էր)*: 1989 թվականին Արևմուտքում ներդրում արած մարդիկ տուժել են (նրանք շահույթ չեն ունեցել 2000 թվականից հետո), մինչդեռ այլ երկրներում լիովին վարձատրվել են: Այս «մեծ վերահավասարեցումը» շատ ավելի զարմանալի պատմական իրադարձություն է, քան Ֆուկույամայի նրբորեն կանխատեսած կոմունիզմի կործանումը: Երբ նա այդ մասին գրում էր, աշխարհի տնտեսական ճգնաճակնության կենտրոնը գլխավորապես դեռ Հյուսիսային Ատլանտիկան էր: Այսօր այն Ուրալից անդին է և 2025-ին կլինի Ղազախստանից հյուսիս՝ մոտավորապես աշխարհագրական այն նույն լայնության վրա, որտեղ 1500-ականներին էր՝ Արևմուտքի վերելքի նախօրեին²:

Արևմտյան տնտեսական դանդաղ զարգացման ամենանորաձև բացատրությունը դելևերեջինգն է՝ պարտավորությունների վերանայումը՝ պարտքի կրճատման ցավոտ գործընթացը (կամ հաշվեկշռի վերակազմավորումը): Իհարկե, այսօր կան Արևմուտքի պարտքի աճի մի քանի դրոշմապատճառներ: ԱՄՆ պատմության մեջ 2-րդ դեպքն է, որ պետական ու մասնավոր պարտքի հանրագումարը գերազանցել է ՀՆԱ-ի 250%-ը:

Մակքինզի Գլոբալ ինստիտուտը 50 երկրում կատարած հետազոտությամբ հայտնաբերել է դելևերեջինգի 45 դեպք՝ սկսած 1930 թվականից: Դրանցից 8-ում պետպարտք-ՀՆԱ

* Համաշխարհային բանկի տվյալով 2017-ին ԱՄՆ ՀՆԱ-ն կազմել է 19 տրիլիոն 485 միլիարդ դոլար, Չինաստանինը՝ 12 տրիլիոն 143 միլիարդ դոլար: (Բոլոր ծանոթագրությունները՝ newmag-ի: Հեղինակի ծանոթագրությունները հիշատակվում են առանձին):

հարաբերակցությունը գերազանցել է 250%-ը: Այս ցուցանիշը ոչ միայն ԱՄՆ-ում է, այլև անգլախոս հիմնական երկրների մեծ մասում (Ներառյալ Ավստրալիայում և Կանադայում), բոլոր եվրոպական մեծ երկրներում (Գերմանիայում նույնպես), նաև Ճապոնիայում ու Հարավային Կորեայում: Վերավարկավորման օգտին ներկայացվող փաստարկն այն է, որ վարկառուներն ու բանկերը ցանկանում են նվազեցնել իրենց կուտակած պարտքը՝ անխոհեմաբար խաղալով անշարժ գույքի մշտական աճող գների հետ: Բայց մարդիկ սկսեցին ավելի շատ խնայել, քան ծախսել, ինչի հետևանքով ընդհանուր պահանջարկն ընկավ: Պարտքի ճակատագրական ծանրացումը կանխելու համար կառավարությունները և կենտրոնական բանկերը նախաձեռնեցին հարկաբյուջետային ու դրամավարկային խթանիչներ, որոնք աննախադեպ էին խաղաղ ժամանակների համար: Հանրային հատվածում քյուջեի պակասորդն օգնեց մեղմել վնասը, բայց առաջացավ վտանգ, որ մասնավոր պարտքի գերավելցուկը կհանգեցնի պետական պարտքի աճին: Նույն կերպ կենտրոնական բանկերի դրամական միջոցների ընդարձակումը (փողի ավելացումը) կանխեց բանկերի հաջորդական սնանկացումը, բայց բացասական ազդեցություն ունեցավ գնանկման վերացման քաղաքականության հետագա զարգացման ու դրա հաջողության վրա:

Վերավարկավորումից բացի՝ տեղի է ունենում ևս մեկ գործընթաց: 2009 թվականի հունիսից սկսած 3 տարիների ընթացքում ԱՄՆ-ում ստեղծվել է 2.4 միլիոն հավելյալ աշխատատեղ: Նույն ժամանակահատվածում 3.3 միլիոն ամերիկացիներ գրանցվել են որպես անաշխատունակության նպաստ ստացողներ: Հաշմանդամությամբ պայմանավոր-

ված ապահովագրական վճարներ ստացող աշխատունակ տարիքի ամերիկացիների չափաբաժինը 1990 թվականի 3%-ից աճել է ու դարձել 6%³: Գործազրկությունը դառնում է թաքնված ու մշտական: Ամերիկացիները բոլոր առումներով նմանվում են եվրոպացիներին: Աշխատունակներին որակում են անաշխատունակ, և նրանք այլևս երբեք չեն աշխատում: Բացի այդ՝ այդ մարդիկ մնում են նույն վայրում: Ավանդաբար ԱՄՆ բնակչության 3%-ն ամեն տարի տեղափոխվում էր այլ նահանգ, որպես կանոն՝ աշխատանք փնտրելու: 2007 թվականից հետո, սակայն, երբ սկսվեց ֆինանսական ճգնաժամը, այս ցուցանիշը կրկնակի նվազեց: Անկում ապրեց նաև սոցիալական ճկունությունը: Եվ վերջապես, ի տարբերություն Մեծ դեպրեսիայի տարիների՝ մեր «Փոքր դեպրեսիան» բոլորովին չի օգնում կրճատել եկամուտների այն անարդար բաշխումը, որն աննկատ ձևավորվել ու զարգացել է վերջին 3 տասնամյակների ընթացքում: Առավել բարեկեցիկ տնային 1% տնտեսություններին հասնող ազգային եկամտի չափաբաժինը 1970 թվականի 9%-ից աճել ու 2007 թվականին հասել է 24%-ի և 4%-ից էլ քիչ՝ նվազել է ճգնաժամային հետագա 3 տարիների ընթացքում:

Այս ամենի համար վերավարկավորմանը մեղադրելը տեղին չէ: ԱՄՆ-ում լայնորեն քննարկում են գլոբալացումը, տեխնոլոգիական վերափոխումը, կրթությունը և հարկաբյուջետային քաղաքականությունը: Պահպանողականներն 1-ին և 2-րդը դիտարկում են իբրև փոփոխությունների անկասելի խթանիչներ, որոնք ջախջախում են ցածր որակավորում պահանջող աշխատատեղերը՝ ավտոմատացնելով կամ վերացնելով դրանց պահանջարկը: Լիբերալները նախընտ-

րում են աճող անհավասարության պատճառ տեսնել կրթության թերֆինանսավորումը՝ սա կապելով հարկերի կրճատման՝ հանրապետականների քաղաքականության հետ, ինչի հետևանքով շահում են հարուստները⁴: Սակայն բոլոր հիմքերը կան ենթադրելու, որ խնդիրն այլ է: Շատ ավելի կարևոր են որոշ հանգամանքներ, որոնց չէին կարող անդրադառնալ ամերիկյան քաղաքական բանավեժին փոխարինած պրովինցիալ լեզվակոչվները:

Պետական ֆինանսական ճգնաժամը զուտ ամերիկյան երևույթ չէ: Ճապոնիայի, Հունաստանի, Իտալիայի, Իռլանդիայի, Պորտուգալիայի պետական պարտքը նույնպես գերազանցում է ՀՆԱ-ի 100%-ը: Հնդկաստանը նախանշված ժամանակահատվածում ավելի մեծ պակասորդ ուներ, քան ԱՄՆ-ն 2010 թվականին: Ճապոնիան մեծ փորձության էր ենթարկվել՝ կարգավորելով իր պետպարտք-ՀՆԱ կայուն հարաբերակցությունը⁵: Տնտեսության դանդաղ աճի ու խորացող անհավասարության խնդիրները նույնպես ԱՄՆ-ով չեն սահմանափակվում: Անգլալեզու երկրներում ամենաբարեկեցիկ տնային տնտեսությունների «1%»-ին հասնող ազգային հարստության բաժինն աճում էր 1980 թվականից: Նույն գործընթացը՝ թեկուզ ավելի մեղմ, նաև եվրոպական որոշ երկրներում էր՝ հատկապես Ֆինլանդիայում, Նորվեգիայում, Պորտուգալիայում, շատ այլ զարգացող շուկաներում, նաև Չինաստանում⁶: Արդեն 2010 թվականին Չինաստանում կար 800,000 դոլարային միլիոնատեր և 65 միլիարդատեր: 2010 թվականին աշխարհի հարուստների «1%»-ի մեջ 1.6 միլիոնը չինացիներ էին, որոնք այս ցուցանիշով մոտենում էին ամբողջ աշխարհի հարուստների 4%-ին⁷: Միաժամանակ

այլ երկրներում, նաև եվրոպայի ամենազարգացած տնտեսությունն ունեցող Գերմանիայում, անհավասարությունը չէր խորանում, մինչդեռ որոշ ավելի քիչ զարգացած երկրներում՝ հատկապես Արգենտինայում, անհավասարությունն աճում էր, բայց տնտեսությունն ավելի գլոբալ չէր դառնում:

Գլոբալացումն այս կամ այն չափով ազդում է բոլոր երկրների վրա: Նույնը կարելի է ասել նաև տեղեկատվական տեխնոլոգիաներում հեղափոխության մասին: Բայց, միաժամանակ, տնտեսական աճի և եկամուտների բաշխման արդյունքները չափազանց տարբեր են: Դրանք բացատրելու համար տնտեսագիտական նեղ ուսումնասիրությունը բավարար չէ: Դիտարկենք պարտքի գերկուտակման օրինակը. մեծ պարտք կուտակած երկիրը բախվում է լուծումների նեղ շրջանակի: Դրանք հիմնականում երեքն են.

1. Աճի տեմպը տոկոսադրույքից ավելի բարձր մակարդակի բարձրացնել տեխնոլոգիական առաջընթացի շնորհիվ և (գուցե) դրամավարկային խելացի կարգավորումներով:
2. Դեֆոլտի ենթարկել պետպարտքի մեծ մասը և սկսել սնանկացման գործընթաց՝ խուսափելով ոչ պետական պարտքի մարումից:
3. Պարտքը «վերացնել» ազգային արժույթի արժեզրկման և գնաձի միջոցով:

Թե այս տարբերակներից որը կընտրի տվյալ պետությունը, չի կարող կանխատեսել այսօր գործող տնտեսագիտական գլխավոր տեսություններից և ոչ մեկը: Ինչո՞ւ Գերմանիան

1918 թվականից հետո գնաց գերգնաճի (հիպերինֆլյացիայի) ճանապարհով: Ինչո՞ւ Միացյալ Նահանգներում 1929 թվականից հետո եղավ մասնավոր դեֆոլտ և սնանկացում: Ինչո՞ւ ոչ հակառակը: Այսօր ավելի ու ավելի անհավանական է թվում, որ ամենազարգացած տնտեսություններից մեկը կարող է «թափ հաղորդել» գնաճին, որպեսզի արժեզրկի սեփական պարտավորությունները, ինչպես բազմիցս եղել է անցած դարի 20-ականներին և 50-ականներին⁸: Բայց ինչո՞ւ ոչ: Միլթոն Ֆրիդմանի* հայտնի խոսքը (գնաճը միշտ ու ամենուրեք դրամական երևույթ է) անպատասխան է թողնում հարցեր, թե, օրինակ, ով և ինչու է ստեղծում փողի ավելցուկը: Իրականում գնաճը գլխավորապես քաղաքական երևույթ է: Դրա հավանականությունը կախված է տարբեր գործոններից՝ էլիտար կրթության բովանդակությունից, տնտեսական մրցակցությունից (կամ դրա բացակայությունից), իրավական համակարգի բնույթից, հասարակության մեջ բռնության մակարդակից և, վերջապես, քաղաքական որոշումների կայացման բուն գործընթացից: Միայն պատմականորեն կարելի է բացատրել, թե ինչու է այդքան մեծ թվով երկրների պարտքը վերջին 30 տարիներին ստացել այնպիսի ձև, որ այն, ըստ էության, անհնար է նվազեցնել գնաճի միջոցով: Նաև՝ թե ինչու է դա հանգեցնում մի իրավիճակի, որ հաջորդ սերունդն ստիպված է լինում վճարել նախորդների՝ հայրերի ու պապերի փոխարեն:

Նույնքան հեշտ է բացատրելը, թե ֆինանսական ճգնաժամի համար ինչու են մեղավոր չափից դուրս մեծ ֆինանսական կազմակերպությունները, որոնք շատ մեծ պարտքեր ունեն:

* Milton Friedman - Միլթոն Ֆրիդման, (1912-2006), ամերիկացի տնտեսագետ, 1976-ին Նոբելյան մրցանակի է արժանացել տնտեսագիտության ոլորտում:

Բայց շատ ավելի դժվար է հասկանալ, թե ինչու ավելի քան 4 տարվա բանավեճերից հետո դեռ լուծված չէ «պայթելու վտանգի առաջ կանգնած չափից դուրս մեծ բանկերի» հարցը: Չնայած վերջերս ի հայտ եկած բառացիորեն հազար էջանոց օրենքին (Դոդդ-Ֆրենկի)⁹ վիճակն ակնհայտորեն վատթարացել է⁹: Մեր օրերում ԱՄՆ-ում ընդամենը 10 բազմապրոֆիլ ֆինանսական կազմակերպություններ պատասխանատու են ֆինանսական ակտիվների 3/4-ի համար, որոնք գտնվում են ԱՄՆ պետական կառավարման ներքո: Բայց մեկ է՝ երկրի խոշորագույն բանկերին չի հերիքում առնվազն 50 միլիարդ դոլար, որպեսզի համապատասխանեն կապիտալի ինքնաբավության Բազել III չափորոշիչներին*։ Կրկնեն. միայն քաղաքական ու պատմական մոտեցումները կարող են բացատրել, թե ինչու են արևմտյան քաղաքական գործիչները մեր օրերում բանկերին միաժամանակ կոչ անում ընդլայնել վարկերն ու կրճատել հաշվեկշիռը:

Ինչո՞ւ է շուկայում նոր դեղամիջոցի հայտնվելն այսօր 100 անգամ թանկ, քան 60 տարի առաջ: Սա երևույթ է, որը Խուան Էնրիկեսն** անվանում է «Մուրի օրենքը՝ հակառակ»***: Ինչ պատճառով ԱՄՆ մանդամթերքի և դեղամիջոցների անվտանգության ստուգման գործակալությունը կարգել էր կերակրի աղի վաճառքը, եթե այն շուկա դուրս բերվեր իբրև նոր դեղամիջոց

* Բազել III չափորոշիչներ - բանկային վերահսկողության կանոններ, որոնք մշակվել են 2010-11թթ.: Չափորոշիչներն ուղղված են ռիսկերի կառավարման արդյունավետության բարձրացմանը:

** Juan Enriquez - Խուան Էնրիկես (ծնվ. 1959թ.), մեքսիկացի գործարար, Excel Venture Management-ի կառավարիչ-տնօրենն է:

*** Moore's law - Մուրի օրենք. ձևակերպել է Intel-ի համահիմնադիր Գորդոն Մուրը 1965-ին: Ըստ այդ օրենքի՝ համակարգչային կրիչներում տրանզիստորների քանակը կրկնապատկվում է երկու տարին մեկ անգամ: (Ծանոթագրությունը՝ հեղինակի):

(վերջիվերջո աղը մեծ չափաբաժնով վնասակար է)¹⁰: Եվս մեկ օրինակ. ամերիկացի լրագրողն ինչո՞ւ պիտի ստիպված լինի 65 օր ծախսել Նյու Յորքում լիմոնադի վաճառքի կետ տեղադրելու թույլտվություն ստանալու համար (ներառյալ աննդամթերքի պաշտպանության արտոնագիր ստանալու վրա ծախսված 5 շաբաթը)¹¹: Տնտեսագետները հենց այս հյուժիչ թղթաբանության մեջ են տեսնում Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի աղքատության պատճառները: Մանդի ու դեղամիջոցների անվտանգության գործակալության խիստ չափորոշիչների իմաստը թալիդոմիդի պես քնաբերի վաճառքը կանխելն է: Բայց ստացվել է այնպես, որ ավելի շատ մարդ կարող է վաղաժամ մահանալ դեղամիջոցի բացակայությունից, քան ոչ շատ խիստ հսկողություն անցած դեղամիջոցի հարակից վնասակար ազդեցությունից: Մենք ուշադիր հետևում ենք վնասակար ազդեցությանը, բայց հաշվի չենք առնում այն գինը, որը վճարվում է նոր դեղերի՝ շուկա մուտք գործելու արգելքի համար:

Ինչո՞ւ ԱՄՆ-ում սոցիալական ձկունությունը վերջին 30 տարում կրճատվել է այնքան, որ ամենաաղքատ 25%-ի մեջ հայտնված ընտանիքում ծնված երեխան կրկնակի քիչ շանս ունի կյանքի ընթացքում հայտնվել ամենահարուստ մարդկանց քառորդում¹²: Կար ժամանակ, երբ ԱՄՆ-ն համարվում էր անսահման հնարավորությունների երկիր, որտեղ ընտանիքն ընդամենը մեկ սերնդում կարող էր ամենաաղքատից դառնալ ամենահարուստը: Հիմա, սակայն, եթե ձեր ծնողները բնակչության ամենահարուստ 20%-ի մեջ չեն, և դուք բարձրագույն կրթության դիպլոմ չունեք, այդ շարքում հայտնվելու ձեր շանսն ընդամենը 5% է: Չարլզ Մյուրեյի* «Կոգնիտիվ էլիտայի» ներկայացուցիչներ-

* Charles Alan Murray - Չարլզ Մյուրեյ (ծնվ. 1943թ.), ամերիկացի քաղաքագետ, սոցիոլոգ: